



Հանրապետական մանկավարժահոգեբանական կենտրոն

«Հանրակրթական դպրոցների ուսուցիչների և ուսուցչի օգնականների դասավանդման հմտությունների
զարգացման ապահովում» ծրագիր

ՀԵՏԱԶՈՏԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔ

Դպրոց՝ Վանաձորի Հ.Թումանյանի անվան N3 հիմնական դպրոց

Թեմա՝ «Տեղեկատվական տեխնոլոգիաների օգտագործումը
դասապրոցեսում՝ որպես սովորողի մոտիվացիան բարձրացնելու միջոց»:

Վերպատրաստող մեթոդ՝ Սյուզաննա Ափինյան

Կատարող՝ Նաիրա Մխիթարյան

Վանաձոր 2023

ԲՈՎԱՆ ԴԱԿՈՒԹՅՈՒՆ

Ներածություն	էջ 3
ԳԼՈՒԽ 1. Ժամանակակից տեղեկատվական և հաղորդակցական տեխնոլոգիաների կիրառումը ուսուցման գործընթացում	էջ 6
ԳԼՈՒԽ 2. Աշխատանքային գործիքներ	էջ 14
Եզրակացություն	էջ 16
Գրականություն	էջ 18

ՆԵՐԱՆՈՒԹՅՈՒՆ

Ներկա ժամանակները թելադրում են իրենց պայմանները, և իրեն ժամանակակից համարող ցանկացած մարդ պետք է նվազագույն գիտելիքներ ունենա ՏՀՏ-ից: Ներկայումս անհնար է պատկերացնել ուսուցումն առանց նորագույն տեխնոլոգիաների կիրառման, առանց դասաժամերին տեղեկատվական տեխնոլոգիաների ներգրավման:

Ուսուցման էլեկտրոնային միջոցների գործածումը նկատելիորեն ազդում է կրթական համակարգերի վրա և նպաստավոր պայմաններ ստեղծում ուսուցման նորագույն մեթոդների զարգացման համար:

Ժամանակակից տեխնոլոգիաների ներդրումը շատ կարևոր է ուսուցումն անհատականացնելու համար: Դրանց միջոցով կարելի է բազմազան ու բազմաբնույթ առաջադրանքներ կազմել, իրականացնել միավորային և ձևավորող գնահատում, շնորհանդեսներ պատրաստել, դասերը, միջոցառումները, հանդիպումները հետաքրքիր ու բովանդակալից դարձնել: Սովորողներն ուսուցչի օգնությամբ պետք է կարողանան ձեռք բերել, արժևորել և փոխանցել տեղեկությունները: Տեխնոլոգիաների կիրառման արդյունքում զարգանում են սովորողների մտածողությունն ու համակարգչային գրագիտության հմտությունները:

Հետազոտության արդիականությունը պայմանավորված է կրթության բնագավառում **ՏՀՏ-ների** կիրառման անհրաժեշտությամբ և արդյունավետությամբ, և դրանց կիրառման դժվարություններով: Այսօր կրթության բնագավառում նորագույն միտումների քննարկումն անհնար է թվում առանց նորագույն տեխնոլոգիաների առկայության: Տեղեկատվական տեխնոլոգիաների կիրառումը նպաստում է կրթության որակի բարձրացմանը: Այս իմաստով դպրոցներում տեխնոլոգիայի կիրառվող բազմազան ձևերը հեշտացնում են մեր գործունեությունը:

Հետազոտության նպատակն է՝ Տեղեկատվական նոր տեխնոլոգիաների ներդրման միջոցով (համակարգչով, էլեկտրոնային գրատախտակով կազմակերպվող դասեր, խաղերի, գծագրերի, տեսանյութի, նկարների միջոցով ցուցադրվող դասեր)

- նպաստել երեխաների ճանաչողական, մտավոր, կարողությունների զարգացմանը,
- ուսումնասիրել **ՏՀՏ-ի** կիրառման հնարավորությունները ուսուցման գործընթացում:

Հետազոտության խնդիրները.

- ուսումնասիրել ծրագիրն ու դասագրքերը **ՏՀՏ-ի** կիրառման տեսանկյունից:
- պարզել, թե **ՏՀՏ-ի** կիրառման ինչ հնարավորություններ կան, և հիմնավորել այդ դասերի արդյունավետությունը:
- ուսումնասիրել **ՏՀՏ-ի** կիրառման պահանջները:

Հետազոտության մեթոդական համակարգը ներառում է՝

Սովորողների տեղեկատվական տեխնոլոգիաների տիրապետման և դրա հետ շահկապված լեզվահաղորդակցական կարողությունների զարգացման խնդիրը ընդհանուր հարցադրումների և նպատակադրումների մակարդակից փոխադրվում է կոնկրետ, առարկայական դաշտ: Հանգամանորեն պարզաբանվում են **ՏՀՏ** տարրերի ուսուցման

մեթոդական հարցերը, առաջարկվում մեթոդական հնարներ, ներկայացվում խնդիրների, վարժությունների և առաջադրանքների նոր տեսակներ, որոնց նպատակային գործածման շնորհիվ ոչ միայն բացահայտվում են ուսումնական նյութի նանաչողական և կիրառական նշանակությունը, այլև ուսուցման գործընթացը սովորողների համար դառնում է մատչելի, հետաքրքիր և գրավիչ:

Գլուխ 1. Ժամանակակից տեղեկատվական և հաղորդակցական տեխնոլոգիաների կիրառումը ուսուցման գործընթացում

ՏՀՏ-ի օգտագործման հնարավորությունների շառավիղը բավականին լայն է: Ուսումնական գործընթացի կազմակերպումը առաջին հերթին պետք է խթան հանդիսանա սովորողների նախադասական կարողությունների ակտիվացման, ուսումնական նյութի հաջող յուրացման համար և նպաստի սովորողի զարգացմանը: Հետևաբար, ՏՀՏ-ն պետք է կատարի որոշակի կրթական գործառույթ, օգնի երեխային կողմնորոշվել տեղեկատվության հեղեղի մեջ, ընկալել այն, հիշել, և ոչ մի դեպքում չվնասել առողջությունը: ՏՀՏ միջոցները պետք է գործեն որպես ուսումնական գործընթացի օժանդակ տարր, այլ ոչ հիմնական: ՏՀՏ-ի հետ աշխատանքը պետք է հստակ մտածված և չափավորված լինի: Ուսուցիչը դասին նախապատրաստվելիս պետք է հանգամանորեն մտածի ՏՀՏ-ի օգտագործման նպատակի և ձևի մասին:

ՏՀՏ-ի օգտագործման հիմնական առանձնահատկությունները, որոնք կօգնեն ուսուցչին դասի ժամանակ ստեղծել բարենպաստ պայմաններ և հասնել նյութի յուրացման բարձր մակարդակով յուրացմանը, դիդակտիկ նյութերի ստեղծումն է և կիրառումը. ինչպես օրինակ/առաջադրանքների տարբերակներ, աղյուսակներ, սխեմաներ, գծագրեր, ցուցապաստառներ և այլն/.

- ✓ ուսումնական նյութի վերաբերյալ պրեզենտացիայի /շնորհանդես/ ստեղծում,
- ✓ պատրաստի ծրագրային արտադրանքի օգտագործում,
- ✓ դասին նախապատրաստվելու, արտադասարանական միջոցառումների, ինքնակրթության համար ինտերնետ ռեսուրսների փնտրում և օգտագործում,
- ✓ կրթության և դաստիարակության արդյունքներին հետևելու համար մոնիթորինգի ստեղծում,
- ✓ տեքստային աշխատանքների ստեղծում,
- ✓ մեթոդական փորձի ընդհանրացում էլեկտրոնային տեսքով:

ՏՀՏ-ի կիրառումը դասապրոցեսում.

- ուժեղացնում է աշակերտների մոտիվացիան,
- հնարավորություն է տալիս օգտագործել թարմ ինֆորմացիա,
- իրականացնել երկխոսություն ինֆորմացիայի աղբյուրի հետ,
- խնայել ժամանակը,
- հնարավորություն է տալիս լսարանային կամ անհատական պարապմունքները դարձնել ավելի հետաքրքիր,
- ուսուցչին տալիս է տեխնոլոգիական մեծ պահուստ:

Դասապրոցեսում կիրառելով ՏՀՏ-ն՝ կարելի է լավագույնս համադրել դասավանդման այս կամ այն մեթոդի հետ և ստանալ փայլուն արդյունք: Տեղեկատվական տեխնոլոգիաների կիրառությունը հնարավորություն է տալիս բարձրացնել գիտելիքների որակը: Համակարգչային տեղեկատվական տեխնոլոգիաների կիրառությունը ուսուցման մեջ կրթական գործընթացի զարգացման կայուն ուղղություններից մեկն է:

Դասարանում տեղեկատվական և հաղորդակցման տեխնոլոգիաների կիրառումը թույլ է տալիս զարգացնել աշակերտների շրջանում շրջակա աշխարհի տեղեկատվական հոսքը, սովորել տեղեկատվության հետ աշխատելու գործնական ուղիները, զարգացնել հմտություններ, որոնք թույլ են տալիս տեղեկություններ փոխանակել ժամանակակից տեխնիկական միջոցներով: ՏՀՏ-ի օգտագործումը դասարանում թույլ է տալիս տեղափոխել բացատրական պատկերազարդ մեթոդից դեպի գործունեության ոեժիմ, որտեղ երեխան դառնում է կրթական գործունեության ակտիվ առարկա: Սա նպաստում է աշակերտի գիտակցված ուսուցմանը:

Ժամանակի ընթացքում տեխնոլոգիաների զարգացումը ստեղծում է հաղորդակցման նոր ձևեր: Այս տեխնոլոգիական առաջխաղացումները հեղաշրջման հիմք են հանդիսացել հաղորդակցման ողջ գործընթացում: Տեխնոլոգիաների զարգացումը հնարավորություն է տալիս վերացնել այն արգելքները, որոնց հանդիպում են սովորողներն ու ուսուցիչները ամբողջ աշխարհում: Հզոր ծրագրերն ու համացանցը փոխում են գիտելիքներ ձեռք բերելու մեր ուղիներն ու հնարավորությունները: Հաղորդակցման գործունեության հետազոտությունները ներկայումս պատկանում են մարդկային ամենաարդիական ու գլոբալ խնդիրների թվին: Հաղորդակցման մեջ մենք ոչ թե ուղղակի հաղորդում ենք տեղեկություն, այլ փոխանակում ենք վերաբերմունք, գիտելիքներ, հույզեր և այլն:

Տեղեկատվական տեխնոլոգիաների օգտագործումը որակապես կփոխի նաև ուսուցչի դերը. ուսուցիչը կդառնա ոչ այնքան գիտելիք հաղորդող, որքան սովորողի կրթական գործը կազմակերպող, նրա հետ ուսումնական նյութը ընտրող, նրան օժանդակող և գնահատող գործընկեր: Հետևաբար՝ վերապատրաստման դասընթացներ կազմակերպելիս պետք է կարևորվեն ուսուցիչների համակարգչային գիտելիքների և հմտությունների զարգացումը և կարծրացած մոտեցումների և հոգեբանական բարդույթների հաղթահարումը:

Համակարգիչը պետք է ներգրավվի դպրոցի կառավարման, ուսումնական գործընթացի կազմակերպման, սովորողների առաջադիմության գնահատման, ծնողների հետ տարվող աշխատանքի և արտադասարանային գործունեության իրականացման մեջ որպես գործիք՝ հաղորդակցման համար:

Մերօրյա կրթության համար տեսողական տեղեկատվությունն ավելի կարևոր է: Ներկայացումներն, անկախ այն բանից, թե ինչի համար են նախատեսված դասի ընթացքում, փոխվում են՝ հանդիսանալով տեսողական նյութ, չպետք է մոռանալ նաև այն, որ տարրական դպրոցում գերիշխում են պատկերավոր մտածողությունը: Զայնա-տեսողական և ինտերակտիվ տեխնոլոգիաների դերը կրթության մեջ ամեն տարի մեծանում է: Դրանք հանդիսանում են ժամանակակից համակարգի անբաժան մասնիկները: Նոր սերունդը մեծացել է հեռուստացույցների, համակարգիչների և հեռախոսների ժամանակաշրջանում և ունեն ավելի մեծ տեսողական հիշողություն և ուսուցչից պահանջում են համապատասխան մոտեցումներ:

Ինֆորմացիոն տեխնոլոգիաներն ունեն մեծ ազդեցություն կրթության բնագավառում.

1. ընդլայնվում են նոր տեղեկատվության փնտրման հնարավորությունները, ինչը նշանակում է, որ ավելի մանրակրկիտ է յուրացվում այս կամ այն նյութը,
2. լայն հնարավորություններ է տալիս մանկավարժին հետաքրքրել աշակերտին և սովորեցնել ինքնուրույն աշխատել ոչ ավանդական մեթոդով, փնտրել այս կամ այն խնդրի լուծումը,
3. հնարավորություն է տալիս տարաբնույթ աշխատանք իրականացնել, արագ և ճիշտ ձևով դեկավարել աշակերտի գործունեությունը, ինչը հնարավորություն է տալիս դասը կազմակերպել այնպես, որ ցանկացած աշակերտ դասը յուրացնի:

Առանց տեղեկատվական տեխնոլոգիաների չենք կարող մեզ պատկերացնել ժամանակակից դպրոցում: Ի հայտ են գալիս անսահմանափակ հնարավորություններ ուսումնական գործունեության համար՝ զարգացնելով միտքը:

Համակարգիչը, պրոյեկտորը և ինտերակտիվ գրատախտակը կարելի է օգտագործել որպես անհատական կրթության միջոց, կրթական նյութի կազմակերպման միջոց, ակնթարթորեն գնահատել աշակերտի հաջողությունները և ստացած տեղեկատվությունը:

Տեղեկատվական դարաշրջանում կրթության բնագավառում կատարվող արմատական փոփոխությունը սերտորեն առնչվում է տեղեկատվության և հաղորդակցության արդի միջոցների զարգացման և տարածման հետ:

Դպրոցականների ուսումնական գործընթացում տեղեկատվական տեխնոլոգիաների օգտագործման նպատակահարմարությունը կախված է տարիքային այնպիսի առանձնահատկություններից, ինչպիսիք են տեսողական պատկերավոր մտածողության զարգացումը՝ բանավոր և տրամաբանական մտածողության համեմատ, ինչպես նաև անալիզատորների անհավասար եւ ոչ բավարար զարգացումը, որոնց շնորհիվ են երեխաները ընկալում ինֆորմացիան՝ դրա հետագա մշակման համար:

Տեղեկատվական տեխնոլոգիաների կիրառումը թույլ է տալիս ներգրավվել ուրիշ աշխարհ, տեսնել այն քո աչքերով:

ՏՀՏ օգտագործումը դպրոցում թույլ է տալիս աշակերտների նախնական գործունեությունը խորացնելով՝ դասեր վարել բարձր գեղագիտական նաշակը ձևավորելով (երաժշտություն, անիմացիա), անհատական մոտեցում ցուցաբերել աշակերտին:

Ժամանակակից երեխան ապրում է էլեկտրոնային մշակույթի աշխարհում:

Ուսուցչի դերը տեղեկատվական մշակույթի մեջ նույնպես փոխվում է՝ նա պետք է դառնա տեղեկատվական հոսքի համակարգող: Այսինքն, ուսուցիչը պետք է ունենա ժամանակակից տեխնիկա և տիրապետի կրթական նորագույն տեխնոլոգիաներին՝ երեխայի հետ նույն լեզվով հաղորդակցվելու համար, պետք է կարողանա ժամանակակից տեղեկատվական և հաղորդակցման տեխնոլոգիաներ օգտագործելով՝ ուսումնական գործընթացը կազմակերպել:

Տեղեկատվական տեխնոլոգիաների օգտագործումը որպես ուսուցման դիդակտիկ միջոցներ

- Դասի կազմակերպում տեղեկատվական տեխնոլոգիաների օգտագործմամբ,

- Դպրոցականների նախագծային աշխատանքների իրականացում՝ տեղեկատվական տեխնոլոգիաների կիրառմամբ:

Ուսուցիչը դասին նախապատրաստվելիս պետք է հանգամանորեն մտածի տեղեկատվական տեխնոլոգիաների օգտագործման նպատակի և կիրառման ձևի մասին: Տեղեկատվական տեխնոլոգիաների կիրառմամբ ուղեկցվող դասերը իրենց հստակության, գեղեցկության և տեսանելիության շնորհիվ ուսումնական նյութի ընկալման ընթացքում առավել մեծ տպավորություն են թողնում սովորողների հոգեբանա-հուզական ֆոնի վրա:

Տեղեկատվական տեխնոլոգիաների օգտագործումը դասի տարբեր փուլերում.

- սովորողների նախապատրաստում նոր նյութի յուրացմանը,
- նոր նյութի յուրացում,
- նոր նյութի ամրապնդում,
- դասի ամփոփում,
- տնային առաջադրանք:

Մեդիա ներկայացման կառուցվածքային դասավորությունը զարգացնում է համադրական - վերլուծական մտածողությունը:

Կարելի է տարբերակել մեդիա ներկայացմամբ անցկացվող դասի հետևյալ առանձնահատկությունները՝

- կավիճով գրված պատկերի որակը չի կարող համեմատվել էկրանի վրայի կոկիկ, պայծառ, հստակ և գունավոր պատկերի հետ,
- շնորհանդեսի ներկայացման ժամանակ սովորողի աշխատանքային տարածքը լավ լուսավորված է,
- տեղեկատվական տեխնոլոգիաներ օգտագործող դասավանդողը ստիպված է մեծ ուշադրություն դարձնել ուսումնական նյութի մատուցման տրամաբանությանը, որը դրական է անդրադառնում սովորողների գիտելիքների մակարդակի վրա:

Ավելի էական է, որ աշակերտները սկսում են համակարգչին վերաբերվել արդեն ոչ որպես խաղի միջոց, այլ գործիք՝ ցանկացած բնագավառի աշխատանքի համար:

Գոյություն ունեն տեղեկատվական տեխնոլոգիաների օգտագործմամբ աշխատանքների բազմազան ձևեր դպրոցում անցկացնելու համար: Համակարգիչը դասի բոլոր փուլերում և բոլոր առարկաների ժամանակ առկա է, իհարկե՝ հաշվի առնելով յուրաքանչյուր տարիքին բնորոշ սանիտարա- հիգիենիկ նորմերը:

Մեդիաներկայացումը հնարավորություն է տալիս ուսուցչին՝

- պատկերավոր ներկայացնել դասը,
- ամրապնդել նոր նյութի հաղորդման ընթացքը,
- կարգավորել ներկայացվող տեղեկատվության ծավալն ու արագությունը անիմացիայի շնորհիվ,
- մեծացնել սովորողների հանաչողական ակտիվությունը:

Իսկ սովորողներին հնարավորություն է տալիս՝

- պատկերավոր ներկայացնել ուսումնական նյութը,
- դարձնել դասն առավել հետաքրքիր,
- նոր նյութի հաղորդման պրոցեսը դարձնել առավել ինտենսիվ:

Այսպիսով՝ տեղեկատվական տեխնոլոգիաների օգնությամբ գործնականում լուծվում է անհատական ուսուցման խնդիրը: Գույնի, գրաֆիկայի, մուլտիպլիկացիայի, ձայնի ժամանակակից բոլոր միջոցների կիրառումը տեսագրման տեխնիկային հնարավորություն է ընձեռում վերստեղծել իրական գործունեության պատկերը: Համակարգիչն օգնում է ուժեղացնել ուսուցման շարժառիթը: Աշակերտներն աշխատում են անհատապես, փորձերի և սխալների օգնությամբ հասնում են նիշտ պատասխանին: Արդյունքում դասարանում չի մնում այնպիսի աշակերտ, որը չկարողանա հաղթահարել առաջադրանքը և պասիվ նստել ու սպասել, այս կամ այն առաջադրանքի կատարման վերաբերյալ ուսուցչի արձագանքին: Այսպիսով, տեղեկատվության ընկալման և յուրացման ընթացքի հեշտացումը վառ պատկերների օգնությամբ ցանկացած ժամանակակից շնորհանդեսի հիմքն է: Այդ պատճառով ուսուցիչը պետք է փնտրի համեմատաբար արդյունավետ միջոցներ դասապրոցեսի համար:

Աշակերտներին հրապուրում է իրենց ակտիվ մասնակցությամբ դասի անցկացումը: Դասարանում այդպիսի դասերի ընթացքում ստեղծվում է անմիջական շփման միջավայր, որում աշակերտները ձգտում են արտահայտել մտքերն իրենց բառերով, նրանք սիրով լուծում են խնդիրները, ցուցաբերում են հետաքրքրություն ուսումնասիրվող թեմայի նկատմամբ: Աշակերտները սովորում են ինքնուրույն աշխատել: Աշակերտների մոտ առաջ է գալիս հետաքրքրություն, ավելի բարձր արդյունքներ ստանալու պատրաստակամություն և ցանկություն՝ լրացուցիչ առաջադրանք կատարելու:

ԳԼՈՒԽ 2.ԱՇԽԱՏԱՆՔԱՅԻՆ ԳՈՐԾԻՔՆԵՐ

Կան մի շարք կրթական առցանց հարթակներ, գործիքներ, միջոցներ, որոնք խթանում են աշակերտների՝ ուսուցման նկատմամբ հետաքրքրությունը, նպաստում են սովորել սովորելու կարողության զարգացմանը: Ժամանակակից առցանց հարթակները, որոնք նաև խաղային են, հատկապես տարրական դպրոցի աշակերտների համար

ուշադրությունը կենտրոնացնելու, ուսուցման հանդեպ հետաքրքրությունն առաջացնելու և լիարժեք ներգրավվածությունն ապահովելու մեծ հնարավորություն են ընձեռում: Ուսումնական գործընթացն առավել հետաքրքիր, արդյունավետ դարձնելու համար մեզ այսօր կարող են օգնել մի շարք առցանց գործիքներ և հարթակներ (Kahoot, Playposit,

Padlet, Quizizz, LearningApps, Google forms, Socrative և այլն):

Անդրադառնանք դրանցից մի քանիսին:

Kahoot - ի միջոցով հնարավոր է.

կազմել հարցաշար, դրանում տեղադրել նկարներ, բանաձևեր, գծագրեր, աղյուսակներ,

հարցերն ընտրել ըստ բարդության աստիճանի,

հարցերին ավելացնել նկարագրություն, նկար, տեսահոլովակ,

օգտագործել հավելվածը նաև Skype-ի և Google Hangouts-ի միջոցով:

Quizizz-ի միջոցով հնարավոր է տվյալ տիրույթում աշխատելիս գնահատել սովորողների՝ առաջադրանքների կատարման և՛ արագությունը, և՛ նշգրտությունը:
<https://quizizz.com/admin/quiz/63f5af6dc650d0001d99e826/micros>

LearningApps առցանց միջոցը ուսուցիչների համար ձևավորող գնահատման մեծ հնարավորություն է ընձեռում: Առկա առաջադրանքների հսկայական ընտրանին հնարավորություն է տալիս ստեղծելու.

տարբերույթ ուսումնական խաղեր,

տարբեր թեմաներով առցանց փոխներգործուն թեստեր, առաջադրանքներ, թեստային

աշխատանքներ, վերբեռնել տարբեր ձևաչափերով ֆայլեր,

տարածել ստեղծված առցանց առաջադրանքները հղման և QR կոդի միջոցով, հնարավոր է տարածել հայտարարություններ և կազմակերպել քննարկում գրուցարանի (chat) օգնությամբ:

<https://learningapps.org/display?v=prbyr0zqt23>

«Շրջված դասարան» մոդելը փոխում է ուսուցման մեթոդների կիրառման և ուսումնական հաստատության կառավարման ավանդական մոտեցումը:

Ավանդական կրթական մոդելով տեսական մասը սովորաբար փոխանցվում է դպրոցում, դասարանում՝ առերես ուսուցման շրջանակում, իսկ գործնական մասը հանձնարարվում է կատարել տանը: «Շրջված դասարան» մեթոդի կիրառման ժամանակ տեսական մասն իրականացվում է տանը՝ դասարանում փոխներգործուն ուսուցման համար հնարավորինս շատ ժամանակ շահելու նպատակով: Այս մոդելը հիմնված է ՏՀՏ-ի զարգացման վրա, որոնց շնորհիվ իրականացվում են «դասարանի շրջումն» ու առցանց նյութերի հրապարակումը: Առավել հաճախ դրանք փոքրածավալ տեսանյութեր են, որոնք դասավանդողներն իրենք են պատրաստում կամ ընտրում են այլ գործընկերների հետ առցանց փոխանակված նյութերից, իսկ սովորողները դրանք ուսումնասիրում են ինքնուրույն՝ առերես դասընթացից առաջ: Ուսուցումն իրականացվում է դասի ընթացքում դասավանդողի անհատական աջակցությամբ՝ հնարավորություն տալով ժամանակ խնայել ուսումնական ակտիվ աշխատանքների համար:

<https://www.youtube.com/watch?v=0oYJETEPrBk>

ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ

Այս հետազոտական աշխատանքի արդյունքում եկել ենք հետևյալ եզրահանգումներին՝

1. ՏՀՏ-ի նիշտ կիրառման դեպքում ժամանակն ավելի արդյունավետ է օգտագործվում, խթանում ենք գեղեցիկի ընկալումը, բոլոր առարկաների նկատմամբ հետաքրքրությունն ենք ձևավորում, զարգացնում գեղագիտական ավելի բարձր նաչակ:
2. Օգտագործելով համակարգչի երկխոսական, մոդելավորման, գունային և այլ բացառիկ հնարավորությունները՝ հնարավորություն է ստեղծվում դասը դարձնել պարզ, մատչելի, դիտողական:
3. Համակարգիչը կարող է օգնել ուսուցչին՝ ուսուցման գործընթացը բովանդակալից ու հետաքրքիր անցկացնելու համար:
4. Համակարգչային ուսուցումը կարող է առավել բարձր արդյունք ապահովել միայն այն դեպքում, երբ լիարժեք գիտակցվի, որ դա բոլորի և յուրաքանչյուրի գործն է, երբ համակարգչային գրագիտությանը տիրապետելու խնդիրը դիտարկվի որպես անհետաձգելի խնդիր:

Նոր տեղեկատվական տեխնոլոգիաների կիրառությամբ առարկայի ուսուցումը հնարավորություն է ընձեռում առաջադրել կանխորոշվող նպատակներ և շտկել կրթական գործընթացը, ուսուցման գործընթացը դարձնել արդյունավետ, կառավարվող, իրականացնել կրթական գործընթացի լիարժեք ցիկլը: ՏՀՏ կիրառությունը դասաժամերին հնարավորություն է տալիս սովորողներին դիտարկելի ներկայացնել նյութը, դյուրինացնել մանկավարժի աշխատանքը,

սովորողների հետաքրքրվածության ուղիով բարձրացնել առաջադիմությունը, ինչպես նաև կրճատել նյութի բացատրությանը տրամադրված ժամանակը և մեծ ուշադրություն հատկացնել ամրագրմանը: Դասերին ՏՀՏ-ի կիրառությունը նորարարությունն է, այլ անհրաժեշտություն, քանի որ հասարակությունը զարգանում է, ուսուցիչները պետք է աշխատեն քայլել ժամանակին համընթաց, իսկ համակարգչային տեխնոլոգիաների հետ ամենօրյա շփումները հնարավորություն են ընձեռնում հեշտությամբ կողմնորոշվել տեղեկատվական տարածությունում:

Դպրոցականի մտավոր զարգացման յուրաքանչյուր փուլ նախատեսում է առանձնահատուկ մոտեցում: Շատ կարևոր է ինֆորմացիայի աղբյուրի նիշտ ընտրությունը: Զարգացման փուլերից յուրաքանչյուրը դպրոցականի ուսուցման տարբերակված մոտեցում և միջավայր է պահանջում: Ահա հենց այս միջավայրը ստեղծելու առումով է, որ համակարգիչը մեծ նարավորություններ է խոստանում:

ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ

1. Աստվածատրյան Մ., Թերզյան Գ., Թորոսյան Ա., Շարխաթունյան Հ., Տեղեկատվական-հաղորդակցական տեխնոլոգիաների կիրառումը հանրակրթական դպրոցում:
2. Հակոբյան Մ. Զ., Պողոսյան Ս. Գ., ՏՀՏ-ի կիրառումը կրթական համակարգում:
3. Հանրակրթության պետական կրթակարգ:
4. [Հանրակրթության պետական չափորոշիչ](#)
5. <https://learningapps.org/>
6. <https://quizizz.com/profile/620cc1f760ad53001dc63fac?section=librar>